



Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисе, Редакция «Месики»,
կամ Tiflis, Rédaction «Meschak»,
Տէլէֆոն № 253.

Պարագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առաւօրեայ).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր տողաւորին 10 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Իբրեւ ընդհանուր կարգ.—Ներքին ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Նամակ եկամտաբերութեան. Նամակ
խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱՅԻՐ-
ՆԵՐ.—ՅԱՅԵԱՐԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ.—ԲԱՆԱՍԻ-
ՐԱԿԱՆ. Ցուցահանդէսը:

ԻԲՐԵԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳ

Մենք յայտնել էինք «Մշակի» մէջ, որ
էջմիաձեւից ուղարկված է Թիֆլիս Մատ-
թէոս վարդապետ Մատթէոսեանի քննադ-
կուկիայի նորաշէն Աստուածածին եկեղե-
ցու այժմեան երէցփոխի գործերը: Բն-
նութիւնը արդէն սկսվել է և շարունակ-
վում է:

Մենք չը գիտենք, թէ ինչու այդ քննու-
թիւնը չը կատարվեց անցեալ տարի, երբ
յարեւելքէն էր այդ քննութեան հարցը:
Ուրախ է, որ քննութիւնը, թէ և ուշ,
նշանակված է և իրագործվում է:

Քննութիւնը վերջապէս կը ցրէ այն
սխալ կասկածները, որոնք բարդված են
այս կամ այն անձի վրա և կը պարզէ
ձշմարտութիւնը: Եւ հոգեւոր իշխանու-
թիւնը կարողութիւն կը ստանայ տեղե-
կանաւոր, թէ որքան հիմնաւոր էին եկե-
ղեցական գումարների վերաբերութեամբ
լրվող հակասական լուրերը:

Այն, ինչ այժմ կատարվել է մի եկեղե-
ցու երէցփոխի գործերի վերաբերութեամբ,
պէտք է զարմնել ընդհանուր կանոն և
քննութիւններ նշանակել բոլոր այն դէպ-
քերում, երբ լուրջ թիւրիմացութիւններ
են ծագում և կասկածի են ենթարկվում
գործող անձինք: Քննութիւնը, եթէ մի
կողմից դատավճիռ է յանցաւորի և
զեղծումների կատարողի համար, միւս
կողմից նա պաշտպանութեան վաճան է
այն մարդկանց համար, որոնք անմեղ տե-
ղը բաժնաստէրի և զրպարտութեան ա-
ռարկայ են դարձել:

Երբ որ քննութիւն նշանակելը կը
գաւառայ մի ընդհանուր կարգ և մի սխ-
տեմ, այն ժամանակ գործողները անելի
ձղրապահ կը լինեն իրանց պաշտօնավա-
րութեան միջոցին, մեղադրողները զգոյշ

կը լինեն մեղադրանքներ բարդելուց, վա-
խենալով պատասխանատուութիւնից, իսկ
հասարակութիւնը ապահով կը լինի, որ
զեղծումները կը մերկացվեն և չարագործ-
ները կը հալածվեն և կը պատժվեն:

Իսկ այժմ մեծ դժուարութեամբ, եր-
կար գրադրութեամբ, երբեմն անձնական զո-
հաբերութիւններով հազիւ հազ արդո-
վում է քննութիւն նշանակել տալ այս կամ
այն չափազանց կարեւոր և արմկայից
դէպքի առիթով: Եւ որ բնորոշ է, որ-
քան քննութիւնն է դժուար իրագործ-
վում, այնքան էլ և դուրսէն անելի մեծ
դժուարութեամբ ու զանգարութեամբ
կայացվում են եղած քննութիւնների վե-
րաբերութեամբ որոշումներ և շատ ան-
գամ քննութիւնները քննում են միայն
թղթի վրա առանց գործնական հետե-
ւանքներ առաջ բերելու:

Էջմիածինը իր պատուի, իր հեղինա-
կութեան, իր ստորագրեալ մարմինների և
պաշտօնեաների բարոյական բարձրութեան
տեսակէտից պէտք է կանոնաւոր հսկողու-
թեան, բարեխիղճ խօսքովի և քննու-
թիւններ նշանակելու հարցը վերածէ սխ-
տեմի: Իսկ բարեկարգ վարչութեան հիմ-
նական պահանջներից մէկն է:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՎԱՏԵՐԻՆՆԵՐԻ

Օգոստոսի 23-ին

Ներքութիւն եւ ինքնուրու ընթերցողներից,
որ չը կարողացայ, խոստման համաձայն, ա-
ռանց երկար ընդմիջումների, հրապարակ հա-
նել տեղիս հայկական կեանքի նկարագրելու
Ուստի շտապում եմ կատարել խոստացածս:

Ինչպէս տեսնում եմ, այնքան էլ հեշտ չէ
ուրիշի պակասութիւնները չօգտին: Այդ եւ
անձամբ զգացի, լսելով մի քանի բաւական
դառն խօսքեր նամակներին վերաբերմամբ:
Առաջին նամակս այստեղից՝ զայրացրեց տե-
ղական աղաներին, իսկ երկրորդը («Մշակ» №
134) մեծ իրարանցում գցեց օրիորդների թմե-
րած աշխարհում: Ահա մի միջնադէպ: Մի օր
մտնում է ինձ մօտ իմ ծանօթ օրիորդներից
մէկը եւ պատմում է, որ օրիորդները սաստիկ

զայրացած են մի թղթակցի դէմ, որ յանդէս
է նրանց քունը խանգարել. կասկածում են
ինձ, բայց հաստատ չը գիտեն, եթէ իմանան,
ապագայ օրին պիտի խղան ձեռք գլխուն: Մի
քանի օրիորդներ հաւաքվում են եւ միասին
կարդում են «Մշակը»: Լաւ ընկերաց յետոյ
նամակ, մէկը համաձայնում է, որ բացի ճշ-
մարտութիւնից մէջը ոչինչ չը կայ, երկրորդը
բողոքում է, որ թէ և ձգարտութիւնն է գրա-
ծը, բայց թղթակցից այդ անելու չէր, որով-
հետեւ մեր պայմանները այնպէս են, որ մենք
հնարաւորութիւն չունենք գործ սկսելու եւ,
բացի դրանից, նա մեղ գործ չէ ցոյց տալիս,
այլ միայն ստում է, որ մենք ոչինչ չենք չի-
նում: Մի երրորդը ստում է բացի ի բաց, որ
դժուար թէ թղթակցի անգիտելը կարողանան
ծակել նրան. մինչեւ տուն հասնելը ամեն ինչ
կը մոռանայ. ուրիշ քան է, անկախում է նա,
եթէ թղթակցից գրէր Պարիզի ժողովների մա-
սին, այդ բաները երբեք չեմ մոռանայ: Ահա
այսպիսի կարծիքներ յայտնելով, ժողովը վա-
րում են եւ ցրվում, վճռելով անպատճառ ի-
մանալ, թէ ով է թղթակցութիւնների հեղի-
նակը:

Այնպիսի մտղթելով ձեռք, փախկասուն
օրիորդներ, անելի լաւ է անցնել գործին:

Նախ պէտք է նկատեմ, որ ինչպէս ամեն
տեղ, ուր կան հայ իւրօնիրներ, այնպէս էլ
այստեղ, մեր օրիորդները գերադասում են խօ-
սել կոտորած օտար լեզուով, քան մայրենի
լեզուով, բայց վերջ ի վերջոյ դուրս է դալիս,
որ ոչ հայերէն են իմանում, ոչ էլ օտար լե-
զու: Մտնողներն էլ volens-nolens ստիպված են
բաւականութիւն տալ իրանց դաւանքներին:
Այստեղ կան անքի, որտեղ բոլորն էլ գիտեն
հայերէն, բայց չեն խօսում. մի փոքր անար-
մար է. չէ որ հարեւանները կասեն թէ՛ մենք
կրթված չենք: հաւատացած են, որ եթէ օ-
տարի լեզուով խօսեն, նոյն իսկ այնպէս, որ
դժուար լինի հասկանալ նրանց խօսակցու-
թիւնը, արդէն մեծ առաջադիմութիւն ցոյց
տուած կը լինեն, եւ անշուշտ յարգանք կը
վայելին չըջապատողներին:

Այդպէս են օրիորդները: Իսկ մեր տեղացի
հայ երիտասարդութիւնը: Եթէ ուզում էք
ճիշդ իմանալ, այստեղ հայ երիտասարդութիւն
չը կայ: Կան միայն երիտասարդներ, որոնց
հայ կամ օտարազգի անուններ չէ կարելի:

Բացի վեց հատ համալսարանականներից, մը-
նացածները տեղական միջնակարգ դպրոցների
երրորդ եւ չորրորդ դասարաններից դուրս ե-
կած եւ այժմ, առանց բացառութեան, բոլորն
էլ գործակատարներ են զանազան խանութնե-
րում, որոնց մեծամասնութիւնը եւ ամենալա-
ւերը ու հարուստները հայերին են պատկա-
նում: Այս գործակատարները, չնչին բացա-
ռութեամբ, ի հարկէ, մտածում են միմյան ի-
րանց ծառայութեան մասին, աշխատում են,
որքան հնարաւոր է, լաւ հագնվել, զարդարվել,
մի քանի բան կարգալ, յետմնաց չը թաւու-
համար եւ, եթէ ընտանիքով ծանրաբեռնված
են, կարողութեան չափ ընտանիքին էլ օգնել:
Այսպիսով շատերը երկար ժամանակ, մի քանի
տարի շարունակ, նոյն իսկ եւ նոյն խանութնե-
թում, մի եւ նոյն «աղայի» մօտ ծառայում են,
բայց ամսական 100 ռուբլի առճիկից անելի չեն
կարողանում ստանալ, մինչդեռ խանութի տէ-
րը շատ անգամ այդ գծադրների աշխատան-
քով առաջին կարողութիւն է դիզում: Եւ գի-
տեղ, ընթերցող, մեր գործակատարները առա-
ջադիմութեան մասին, նոյն իսկ ներկայիս
տեսակէտից, վաճառականական աշխարհում
շատ քիչ են մտածում: Այլ կերպ չէր կարող
լինել Մարդիկ դո՛ւ են, որ կարողացել են
հաստատվել մի տեղ եւ մեքենայաբար անց են
կացնում օրերը, շատ անգամ դառն օրերը:
Իսկ ինչ կարելի է պահանջել այդ պարոննե-
րից: Ամեն բան, եթէ միայն նրանք գէթ մի
բօլէ մտածեն, որ նրանց վրա կան եւ քաղա-
յական պարտականութիւններ:

Այս պարոններից շատ շատերը գիտեն հայե-
րէն, խօսում են Նոր-Նախիջեւանի բարբառով,
բայց միշտ գերադասում են օտար լեզուն,
սակայն այդ էլ ոչ կատարելապէս գիտեն:
Շատ քիչը սրանցից հետաքրքրվում են հայ
գրքով կամ լրագրով. ոչ մի տեղեկութիւն
չունեն իրանց ծագման մասին. մայրենի գրա-
կանութիւնը խորթ մայր է: Այստեղ կայ մի
հայ գրավաճառ, որ անա մօտ 25 տարի է
գրախանութ ունի, բայց շատ սակաւ է պա-
տահել, որ հայերը դիմեն եւ հայ գիրք ուզեն,
բացի, ի հարկէ, նախկին հայ դպրոց-
ների պահանջներից: Այս ամառ անձամբ
յանձնել եմ այդ գրավաճառին 10 օրի-
նակ մի հեղինակութիւնից, որ գրված է
շատ մատչելի լեզուով, արժէ միմյան 50 կ.

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

Սեպտեմբերի 2-ին բացվեց կովկասի յօբե-
լանական գիւղատնտեսական արդիւնաբերա-
կան ցուցահանդէսը, որ բաղկացած է քաղա-
նականների և գրաւել մեր երկրի զանազան վայ-
րերից եւ որով հետաքրքրվում են նոյն իսկ
հեռուոր երկրների ներկայացուցիչներ:

Թէեւ մեզանում մի քանի անգամ տեղի են
ունեցել ցուցահանդէսներ, թէեւ 1889 թւա-
կանին էլ բացվեց համակովկասեան առաջին
ցուցահանդէսը, բայց դրանցից ոչ մէկը այն-
պիսի լայն ծաւալ ու մեծ նշանակութիւն չէ
ունեցել, ինչպիսին ունի այժմեան ցուցահան-
դէսը: Գիւղատնտեսական ընկերութիւնը ամեն
լանջ գործ է դրել նրան արդիւնաւէտ, հետա-
քրքրել ու նպատակաւորաբար դարձնելու հա-
մար...

Այժմեան ցուցահանդէսը թէ՛ իր ծրագրով
եւ թէ՛ բովանդակութեամբ մի առանձին նո-
րութիւն է ներկայացնում մեր երկրի, մեր
անտեսական կեանքի համար: Ահա այդ
պատճառով անկողը չենք համարում նրա բուն
նկարագրութեանը անցնելուց առաջ մի քանի
խօսք ասել ցուցահանդէսների մասին առ հա-
սարակ:

I

Իւրաքանչիւր երկրի, իւրաքանչիւր պետու-

թեան համար հազգին կրթիչ նշանա-
կութիւն ունեն բոլոր այն միջոցները, որոնք
նպաստում են նրա արդիւնագործութեան զար-
գանալուն, որոնք աշխուժում են նրա կուլտու-
րայի բարգաւաճմանը:

Այդ տեսակ միջոցների շարքում առաջնա-
կարգ տեղ են բռնում զանազան տեսակի ու
բովանդակութեան ցուցահանդէսները, որոնց
նպատակն է լինում մի օր եւ է երկրի, ազգի
կամ պետութեան այս կամ այն ձեւի արտա-
դրութիւններն հրապարակ հանել:

Ցուցահանդէսներն իրանց սկիզբը ստացել
են Ֆրանսիական թանգարաններից (museum),
որոնց հիմքը դրել են Մազարինի եւ Կլոսթր
պետական գործիչները: Սակայն այժմեան տի-
պի ցուցահանդէսներին նմանութիւն ունեցող
առաջին ցուցահանդէսը կարելի է համարել
«Ecole des beaux-arts»-ինը, որ տեղի ունե-
ցաւ 1763 թւին եւ որի օրինակին շուտով հե-
տեւեցին նաեւ Դրեզդեն (1768), Բեռլին (1786),
Միւնխեն (1788) քաղաքները եւ այլն:

Այդ ժամանակ պետութիւններն աշխատում
էին ցուցահանդէսների միջոցով մի կողմից
տեխնիկայի կատարելագործմանը զարկ տալ,
իսկ միւս կողմից ազգաբնակչութեան ճաշակի
զարգացմանը նպաստել: Բայց կարծ միջոցից
յետոյ այդ բուն նպատակի հետ կապվեցին եւ
ուրիշ շահեր ու միտումներ, որոնց պատճա-
ռով ցուցահանդէսները մի նոր դրոշմ ստացան.
այսպէս, օրինակ, 1798 թւին Ֆրանսիական
ցուցահանդէսը զուտ քաղաքական նշանակու-
թիւն ունէր, որովհետեւ նա մի առանձին տե-
սակի ցոյց էր հասարակագիտութեան թշնա-

միների դէմ. 1851 թւին Լոնդոնի ցուցահան-
դէսը մի ցոյց էր յօգուտ առեւտրի ազատու-
թեան եւ այլն:

Ժամանակի ընթացքում ցուցահանդէսներն
անելի մեծ նշանակութիւն ստացան եւ նրանց
թիւը աստիճանաբար աճել սկսեց: Առաջինը
Ֆրանսիան էր, որ իր մայրաքաղաքում 1798
թւին բաց արեց արդիւնագործական առաջին
ցուցահանդէսը: Նրա օրինակին հետեւեցին
Եւրոպական միւս պետութիւնները, այն է-
րեմանիսիւն—1818 թւին Միւնխենում, Բեռ-
լին—1820-ին Գինում, Ռուսաստանը—
1829-ին Պետերբուրգում, Աւստրիան—1835-ին
Վիեննայում, Անգլիան—1843-ին Մանչեստե-
րում:

Սկզբներում ցուցահանդէսները կազմակերպ-
վում էին միայն մի օրոշ գաւառի կամ նա-
հանգի համար. յետոյ առաջ եկան ազգային,
միջազգային եւ համաշխարհային ցուցահան-
դէսներ, որոնք շատ մեծ ազդեցութիւն ունե-
ցան թէ՛ ընդհանուր արդիւնագործութեան եւ
թէ՛ ազգերի հաղորդակցութեան համար:

Ռուսաստանի իբրեւ երկրագործական պե-
տութիւն՝ մեծ ուշադրութիւն է դարձրել զը-
խաւորապէս գիւղատնտեսական ցուցա-
հանդէսը տեղի ունեցաւ 1843 թ. Օդեսայում,
իսկ մինչեւ օրս այդպիսի ցուցահանդէսների
թիւը հասել է արդէն մօտ 601-ի:

Եւրոպական պետութիւններից իւրաքանչիւ-
րը աշխատում է նոր-նոր միջոցներ գտնել,
որպէս զի իր կազմակերպած ցուցահանդէսը
նպատակաւորաբար ու արդիւնաւէտ դարձնէ

եւ կարելի է չափ շատ յաճախորդներ գրաւէ:
Այդ ուղղութեամբ գործող ընկերութիւններից
առանձին ուշադրութեան արժանի է «Zentral-
verein für Handelsgeographie», որը մի շարք
մշտական ցուցահանդէսներ է հիմնել Եւրոպայի
մայրաքաղաք քաղաքներում (օր. Ամստերդամ,
Բեռլին, Ֆրանկֆուրտ, Միւնխեն, Շտուտգարտ
եւ այլն). իսկ վերջին ժամանակներս փորձել է
անում Վրոցլայց ցուցահանդէսները կազմա-
կերպելու: Այդ ցուցահանդէսները պիտի հիմ-
նված լինեն առանձին նաւերի վրա, որոնք,
այցելելով աշխարհիս այլ եւ այլ նաւահան-
դիսները, կը կարողանան տեղեկան ընակիչ-
ներին ծանօթացնել գերմանական խելքի ու
աշխատանքի արտադրութիւնների հետ:

Ահա թէ ինչպիսի հնարներ են մտածում,
ինչպիսի միջոցներ են ընտրում քաղաքակրթ
ազգերը իրանց արդիւնագործութեան ու վա-
ճառականութեանը զարկ տալու համար:

Այս բոլոր փառքերն աչքի առաջ ունենալով
մի չափազանց ուրախալի երեւոյթ պիտի հա-
մարել կովկասեան արդիւնաբերական ներկայ
ցուցահանդէսը, որի հանդիսատէր բացումը
տեղի ունեցաւ անցեալ կիրակի, Իսկապէս
դրանից անելի խելքի, անելի նպատակաւոր-
մար միջոց չէր կարելի ընտրել կովկասը Ռու-
սաստանի հետ միացնելու հարիւրամեայ յօբե-
լանը յաւերժացնելու համար, որովհետեւ
միայն այդպիսի ցուցահանդէսը կարող է մի
ամբողջ դադափաւր տալ այն կուլտուրական եւ
տնտեսական առաջադիմութեան մասին, որ
կատարել է մեր երկրը հարիւր երկուս ու ձիգ
տարիների ընթացքում:
Ե. Թ.

եւ երեւակայեցէ՞ք, ընթերցող, որ ամբողջ առաւելագոյն ընթացքով ծախվել է միմիայն 3 օր միայն: Գուցէ ընթերցողը կարծէ, որ մեր գործակալները հետաքրքրուած են ուսուցողականութեամբ: Երանի թէ այդպէս լինէր, որովհետեւ այդ հետաքրքրութիւնը կարող էր դարձնուիլ եւ հետաքրքրութիւն դէպի մայր-բնիկ գրականութիւնը, բայց մեր երիտասարդ գործակալները զրանով էլ շատ քիչ են հետաքրքրուած եւ եթէ մի բան կարողութեամբ, դա միմիայն օրաթերթն է, սակայն այդ էլ շատ անշուք ճարտասանութիւն, որովհետեւ երբեմն, մասնաւոր չէ լինում, շատ տաղտկալի է անցնում ժամանակը, իսկ ներհինդ արգելված է, ուստի ստիպված են լրագրող կարճացնել օրը: Ուրեմն այս էլ կատարվում է մեքենայաբար, այստեղ էլ գիտակցութիւնը բացակայում է: Մտաւոր կարող եւ հաշիւային սխալներն, որոնք հետեւում են ոչ միայն օտար գրականութեան, այլ օտանում են հայ լրագրողներ, կարողութեամբ հայերէն գրքեր, աշխատանք են հետեւել մայրենի գրականութեան եւ, ինչպէս ասում են, միշտ լինում են au courant, սակայն «մի ծաղկով գարուն չի գայ», ուստի շատ ցանկալի է, որ մեր միւս գործակալներն էլ, որոնք կարողութեամբ են օտուար մեծամասնութիւն, հետեւեն իրանց առաջնորդէն ընկերներին: Այն ժամանակ իրանք էլ կասեն, որ իդուր չեն վատնել կենսը:

Իսկ ինչ ասեմ մեր չորս իրաւաբանի եւ երկու բժշկի մասին: Ահա ձեզ օրինակելի կարիքներս, բացի մէկից: Ուրիշ բան աւելցնել դժուար է:

Ահա մեր երիտասարդութիւնը, մեր պարծանքը, մեր ուղեցոյցը:

Նուսէ

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, սեպտեմբերի 5-ին

«Մշակ» № 181-ի մէջ եւ գիմեցի «ԱՐՈՒՅԱՅԵ» շարժաթերթի աշխատակից պ. Բ. Ի. -ին, առաջարկելով նրան հաստատել իր ասածները իմ «Հայոց գրականութիւնը XVIII դարում» աշխատութեան մասին: «Ես ենթադրում եմ, — ասել է ինչ ես այդտեղ, — որ պ. Բ. Ի. այնքան ծանօթ է աւարակին, որ կարողացել է իմ աշխատութիւնը քննել, ուստի հրաւիրում է իր լրագրողութիւնը հաստատել փաստերով, հիմն ված իմ աշխատութեան վրա»:

Գրելով այս տողերը, ես չէի կարծում, թէ իմ աշխատութիւնը կարգաւ եւ նրանից փաստեր հանելով պ. Բ. Ի. համար մի անհնարին քաջագործութիւն է: Բայց այսօր դա փաստ է: Պարտք ինձ պատահանեց «ԱՐՈՒՅԱՅԵ»-ի № 12-ի մէջ, որպէս զի պաշտօնական, թէ ինքը իմ աշխատութիւնը չէ կարողացել նոյն իսկ այն ժամանակ, երբ ես նրանից հրապարակով պահանջեի այդ բանը: Հէնց այդ էլ ինձ հարկաւոր էր պաշտօնականը:

Թէեւ պ. Բ. Ի. ժողովրդի ասածի պէս, չը գիտէ թէ ով է մեծել եւ միայն «Լաւագան վայ» է կանչում, մեծ եւս յայտնում էլ բաւական է, որ այդ պարունի բարեխղճութեան եւ անհաւատութեան մասին գաղափար կազմվի, բայց ես այստեղ վերակէտ չեմ դնում իր պատասխանով պ. Բ. Ի. ցոյց տուցի, որ հետաքրքրական անձնատուութիւն է. գիտէ ոչ միայն ապրում-բով վիճիւնը կայացնել իր չը տեսած ու չը հասկացած գործերի մասին, այլ եւ, որ ամենից գարմանային է, հրատարակել իր այդ յատկութիւնը իրեն մեծ առաքելութիւն:

Պ. Բ. Ի. դարմանում է, որ ես իրանից եմ փաստեր պահանջում: Բայց ինչ դարմանում բան կայ այդտեղ: Դուք կարդացել է՞ք մի գրքուք իմ աշխատութեան մասին եւ վճռել է՞ք, որ ինձ զէմ գրողը «շատ ծայրահեղ» է խօսում: Դուք, որեմն, դատաւոր էք հանդիսանում իմ եւ ինձ զէմ գրողի մէջ: Եւ ես իրաւունք ունեմ ասելու. «Պ. Դատաւոր, ցոյց տուե՛ք, ինչպիսի, թէ ճիշդ է իմ հակառակորդի ասածը. ահա իմ գործը ձեր առաջն է, նայեցէ՛ք, ինչպիսի, եւ ասացէ՛ք: Գրողը եւս գրել այն, ինչ վերագրում է ինձ իմ հակառակորդը, ցոյց էք դնել գտել այն փաստերը, որոնք իրաւունք տային ձեզ այդպիսի վճիռ կայացնելու»:

Բայց իմ խղճով դատաւորը այդքան քաջութիւն չունի: Նա փախուստի է դիմում, ասելով. «Ոչինչ նոր փաստեր եւ պաշտօնային, բացի նրանից, որ բերում է պ. Հարութեան, եւս այստեղ չեմ բերի»: Է՛, եղան դա, պ. Դատաւոր. աղետութեան կամ գոնէ անապատութեան օր օրէնքն է ձեզ թոյլ տալիս ձեր կրթութիւնը սեղմել մի կողմը եւ անտես անել միւս կողմի հրապարակական պահանջը:

Պ. Բ. Ի. իր այդ բախրջողական արդարադատութեան պատիւը ստանում է իր ձեռքից: Իմաստութիւն էլ լինէր նրա կողմից բաւականաչափ այդ փախուստով. բայց չէ, նա ողբերկով է իր բարեկամով եւ ասում է. «Ես միայն կը բերեմ մի փաստ, որի առիթով գլխաւորապէս ես «ճշմարիտ» եմ գտել պ. Հարութեանի մտքերը»: Եւ այդ փաստը, նկատե-

ցէ՛ք, էլի իմ աշխատութիւնի չէ բերվում: Ահա ինչ փաստ է պ. Բ. Ի. բերածը. «Պ. Հարութեան գրում է. պ. Լէօ... անէծքներ է թափում հայ ժողովրդի եւ հոգեւորականութեան գլխին այն պատճառով, որ հայ հոգեւորականութիւնը զիմարդում էր կաթոլիկական պրոպագանդային, պաշտպանելով իրան լանձնված եկեղեցիները երկպառականութիւնից եւ քաջաշատիկից»:

Այսքանով էլ չէ բաւականանում պ. Բ. Ի. Գոնէ թաղված մնալ իր սիրելի բարեկամի թիկունքի ետեւում: Բայց չէ: Նա աւելացրել է եւ իր սեփական ՕՏՇԵԳՅԱՆ-ն: Կուրծք է ձեռնում եւ ձեռք է պատռում, որ հայ գրողներին մի քանիսը յարձակվում են հայ հոգեւորականութեան վրա, չիմանալով չափ ու սահման: Պ. Բ. Ի. ընդոյշ սիրտը խոզված է այդ հանգամանքից. նա չը գիտէ, ի հարկէ, եւ չէ կարող իմանալ թէ որքան իրաւացի են այդ յարձակումները, միայն ցուում է, սաստիկ ցուում է: Վերաբաժնի սրտի կսկիծը նոյն իսկ ներշնչում է նրան մի երեւելի գիւտ. նա գտել է, որ մենք, յարձակվողներս, հիմնովի հայ հոգեւորականութեան ներկայ դրութեան վրա, ուղղում ենք ոչնչացնել նաեւ նրա անցեալ պատմութիւնը: Ոչնչացնել, այո, ասումը այլ եւ այլութեան... Ի՞նչ ուղղութիւններ ենք եղել: Եւ հայոց եկեղեցու նոր թրքիստ ինքնակոչ պաշտպան Բ. Ի. համարեալ արտասուքն աչքերին՝ ասում է. «Մի ետանդով, որ աւելի լաւ գործադրութեան էր արժանի, պ. Լէօ ուղղում է գրել մի շարժումով հոգեւորականութեան անկասկած ծառայութիւնը ոչինչ եւ նոյն իսկ միասնակար համարելով»:

Արդ՝ ես յայտնում եմ, որ սուտ է այս բոլորը: Սուտ է խօսում Հարութեանը—այդ էօ նրա մտաւան փէշակն է, սուտ է խօսում եւ պ. Բ. Ի., միամտաբար զո՞ն գտնալով իր տիրահոյակ բարեկամի խարդախութեան: Ես, ի հարկէ, չեմ կարող այժմ էլ պահանջել, որ պ. Բ. Ի. կարգաւ, վերջապէս, իմ աշխատութիւնը Մարդը չէ ուղղում, ինչ կարող ենք անել: Ուստի հետաքրքրական դատարանի առջեւ եմ դնում իմ բացատրութիւնը:

Ես խօսել եմ Երուսաղէմի պատրիարք Գրիգոր Շղթայակիի, Կ. Պոլսի պատրիարք Յովհաննէս Կոյունի եւ նրա դարձողի մասին (Մուրճ, № 4, էր. 160—173): Ես երկար խօսել եմ Փանձաւարի Եւսի կաթողիկոսի մասին (№ 5—էր. 233—247, № 6—էր. 169—204, № 7—էր. 145—149): Յոյ՛ տուէ՛ք, ասալիս գրադարտիներ, որ ես այդ մի քանի տասնեակի երեւելիքի վրա մեծ համակրանքով, ողբերկութեամբ չեմ վերաբերվել այդ արժանաւոր հոգեւորականներին: Փանի քանի տեղ եւս կրկնել եւ ստորագրել, որ նոր-Ջուղասի եւ Բաղէշի վանական գրողները լուսաւորեալ ճրագ հանդիսացան ընդհանուր խաւարի մէջ, մի շարք պատմաբանայ, ընդունակ հոգեւորականներ պատրաստեցին, որոնք բարեկարգութիւն մտցրին եկեղեցական գործերի մէջ, նուիրվեցին գրականութեան, դաստիարակութեան: Եթէ բոլոր հայ հոգեւորականները չեն եղել Յովհաննէս Կոյունի, եթէ շատ են եղել տգէտ կեղեքիչներ, միթէ մեղաւորը ես եմ: Ի՞նչ կը լինէր, եթէ մեր տիրաւորը հայրենաւերները, փոխանակ վայնառունք բարձրացնելու, հաստատէին, թէ այդպէս չեն եղել այն հոգեւորականները, որոնք դատաւարտութեան, յարձակումների են ենթարկվել իրանց գործերի պատճառով:

Հիմա կաթողիկ պրոպագանդայի մասին: Սկսելով կրօնական խռովութիւնների նկարագրութիւնը, ես երկու կողմն էլ—թէ լուսաւորչականներին եւ թէ կաթողիկներին—անունանել եմ «կատաղի, ֆանատիկոս, անխիղճ», բայց եւ այնպէս, լուսաւորչականներին անունանել եմ համաժողովար համբերող, իրաւաւոր (Մուրճ, № 1, էր. 132): Ժիշդ է, ես չեմ հիշակել եւ երբեք չեմ հիշանայ Աւետիք եւ Յովհաննէս Ջմիւռնիացի պատրիարքի բարբարոսական հայածանցների վրա, թողնում եմ, որ հայոց եկեղեցու զարմանալի քաջ պաշտպան պ. Բ. Ի. ծափահարէ այն ստոր, տարրիկ մասնութիւններին, զատմելի օպանութիւններին, ինքիզիջողական տերորիզմ, որոնք այդ պատրիարքների ամբողջ հոտին են կազմում: Եւ ինչպիսի եկեղեցու հօտից եմ, բայց չէի կամենայ, որ իմ եկեղեցու անունով հարկաւոր անանել հայեր մասնակցին թիւրք դահիճների ձեռքը... Երանի՛ք էլ ի հարկէ, պ. Բ. Ի., որ ոչինչ չը գիտէ իր ազգի պատմութիւնից եւ բաւական է համարում իր բարեկամների ու խնամիկների ասածի վրա հիմնվել: Բայց, թէ հայ հոգեւորականները պաշտպանում էին իրանց եկեղեցին: Լաւ պատպանութիւն է: Բայց այդ զէպքում ինչեւ են Հայաստանայի փառնեցիները վրդովվում ինքիզիջողիչի զէմ, որ կաթողիկ եկեղեցու պաշտպանութեան համար էր հիմնված: Պէտք է իրարայ Կոմիտաս քանանայի նախադասութեան գործերիցի պատմութիւնը (Մուրճ, № 3, էր. 159—161), եւ ամեն մի մարդ, ով փոքր ի շատէ մարդկային զգացմունք ունի, կը գրուի այդ բարբարոսութիւնից: Իսկ պ. Բ. Ի., ի հարկէ անգիտակցաբար, միայն լուրերին նայելով, այդ շարժագործութիւնը փառաբանում է: Ի՞նչ ժամանակներում ենք ապրում...

Եկեղեցու պաշտպանութիւն... Սուտ է դա, պաշտպանութեան հարց չը կար, պէտք էր

միայն թոյլ տալ, որ ամեն մարդ իր ազատ խիղճն ունենար, պաշտէր այն, ինչ լաւ էր համարում: Ուրիշ կերպ ես չեմ հասկանում Քրիստոսի փոխանորդ կոչվող հոգեւորականի պարտականութիւնը: Ինձ համար օրինակ չեն կարող դառնալ անգրագէտ, փաշա Աւետիքները եւ Յովհաննէս Ջմիւռնիացիները: Ինձ համար օրինակ է այնպիսի պատկանելի հոգեւորական, ինչպէս էր Յովհաննէս Կոյունը: Եւ ես ասում եմ. «Իրեւ. ուսումնասէր, հասկացող մարդ, նա (Կոյուն) գիտէր, որ կրօնական հարցերի մէջ ձեռնիք ու վայրենութիւնից աւելի գորուոր է համոզում. եւ այդ պատճառով էլ նրա ժամանակ լոյս հն տեսնում մի շարք վիճաբանական գրութեան, որոնց նպատակն է պաշտօնային հայոց եկեղեցու ուղղափառութիւնը» (№ 4, էր. 170): Ահա ինչպիսի պաշտպանութիւն է ինձ համար յարգելի...

Մի հետաքրքրական հանգամանք էլ: Հայաստանայի տիրացուները վայնասուն են բարձրացնում, որ ես հարուածում եմ հայ հոգեւորականների ֆանատիկոսութիւնը: Բայց պաշտպանում եմ կաթողիկներին—Ոչ! Անմեղների արեւն թափող. ընտանեկան դժբաղ շտեղծող ֆանատիկոսութիւնը ինձ համար միանշանակ տուել է, որ էլ երեւան գար նա: Խղճի, անձնական ազատութեան բռնաբարումը իմ հայրենային օճիք է, սեւ գործ եւ ուրիշ ոչինչ: Երբ Աւետիք պատրիարքը աքաղել, ձեռնիք է տալիս մարդկանց, եւ նրան դատաւարում եմ: Իսկ երբ նոյն այդ Աւետիքին Ֆրանսիական դեպուտ Ծէրիոյ լափչտակում է, ուղարկում Ֆրանսիա, եւ այդ վարժուէրը անուանում եմ «վարժուէրութիւն, զգուշի բարբարոսական բռնութիւն» (№ 3, էր. 156): Հայաստանայի տիրացուները այս հանգամանքի վրա ուղարկութիւն չեն դարձնում. նրանք ասում են, —ինչ ուրիշ է անում վատ է, ինչ մենք ենք անում լաւ է: Գոյնով եւ ատորութիւններով զինված մի եզուրիտ զգուշի է. բայց Կոմիտաս քանանային իրեն Ֆրանսիական լրագրութիւնը կառավարութեան ձեռքը մատնող եւ յետոյ նրա գլխաւոր գիտել փողոց գողող հայոց պատրիարքը մի սուրբ մարդ է... Ահա ինչ են դաւանում հայոց եկեղեցու անունով խօսող փառնեցիները:

Այս բոլորից պարզ է, որ պ. Բ. Ի., չը նախաճ իմ պահանջին, չէ կամեցել կամ չէ կարողացել բարեխիղճ քննադատի զեր կատարել, այլ աւելի նախապաշտել է համարել թուրքիկները, անգիտակցորէն ուրիշ ասածը կրկնողի դեր: Եւ այդպիսի մարդիկ են ուղղում ներկայացնել հայոց գրականութիւնը ուսուցիչութիւններին, ուսուցիչ լրագրողներին մէջ: Հրաշալի բան, ասպարէզք բաց է, ուսուցիչութիւնը են անտեղեկ են, ինչպէս չօգտվել այդ հանգամանքից եւ փառաւոր կերպով չը շոյել այս կամ այն բարեկամի, քաւորի գուրբը:

Ահա ինչն էլ ամենից ցուալին: Ահա ինչն է ինչ եւ ուղղում լոյս հանել:

Ինչ վերաբերում է պ. Բ. Ի. իմ հասցէին գործ անած «կարծեցեալ ազատամարտ» եւ այլ այսպիսի անխաղախութիւն ու յարձակումներին, եւս միանգամայն աւելորդ եմ համարում որ եւ է բան ասել, որովհետեւ համոզված եմ, որ իմ քաջ արտիստը այդ դէպքում էլ գերադասել է թուրքիկի դերը, ասում է այն, ինչ լաւ է առանց ամենափոքր հասկացողութիւն ունենալու, թէ ինչ է ասում:

Իմ վերեւ բերած փաստերը կարծեմ շատ բաւական են, որ ես այդպէս վերաբերվեմ պ. Բ. Ի.-ին...

Լէօ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կովկասեան յօրեկանական ցուցահանդէսի մամուլի բաժանմունքի պ. կարգադրիչը ուղարկել է մեզ հետեւեալ տեղեկագրութիւնը. «Կովկասեան Կայսերական գիւղատնտեսական ընկերութեան խորհուրդը մի նամակով զըրված սեպտեմբերի 1-ին եւ ուղղված ինձ, առաջարկում է կազմակերպել կովկասեան պարբերական մամուլի ներկայացուցիչների համաժողով՝ մամուլի գրութիւնը եւ կարիքները պարզելու նպատակով: Այս հարցերի նախնական քննութեան համար առաջարկված է ինձ խորհրդակցութեան հրաւիրել մամուլի այն ներկայացուցիչներին, որոնք մասնակցում են ցուցահանդէսին: Այս պատճառով խնդրում եմ ձեզ շնորհ բերել ժողովի, որ պէտք է տեղի ունենայ չափով, սեպտեմբերի 8-ին, երեկոյան 7 ժամին «Кавказский Вестник» աստագրի խմբագրատանը»:

Կովկասեան ցուցահանդէսը մինչեւ այժմ կատարող չունի: Այնպիսիներ իրանց ձեռքին չունեն մի ուղեցոյց, որ օգնէ նրանց ուսումնասիրելու ցուցահանդէսի իրերը: Կատարող կազմիւն հարցը քննվել կարգադրիչ մասնաժողովի նիստում, սեպտեմբերի 4-ին: Որոշվեց հրատարակել իւրաքանչիւր բաժնի կատարող անանձին, որպէս զի մի որ եւ է բաժնի անպարտաւոր կատարողի պատճառով միւսները չը յետաձգվին: Կարգադրիչ մասնաժողովը յոյս

ւնի կատարողները տպագրել մինչեւ ամսի 15-ը:

Երեկվանից Կովկասեան ցուցահանդէսը այնպիսիու համար նշանակված են հետեւեալ զննորը.—առաւօտից մինչեւ երեկոյան ժամի 6-ը, երբ փակվում են ցուցահանդէսի զխաւոր շինութիւնը եւ պալիլիօնները, բոլոր օրերը, բացի հինգշաբթի եւ կիրակի օրերից, պէտք է վճարել 20 կօպէկ, հինգշաբթի օրերը—30 կօպէկ, իսկ կիրակի օրերը—10 կօպէկ: Երեկոյան ժամի 6-ից յետոյ՝ կիրակի օրերը պէտք է վճարել 20 կօպէկ, հինգշաբթի օրերը—50 կօպէկ, իսկ մնացած օրերը—30 կօպէկ:

Թիֆլիսը սկսել են այցելել զանազան անձինք ցուցահանդէսը տեսնելու եւ երկրի հետ ծանօթանալու համար: Հիւրերի թիւում են Մոսկվայում հրատարակվող «ВУДЫЛЬНИКЪ» ծագրական պատկերազարդ հանդէսի խմբագիր Վ. Լեւինսկի, պալատի մինիստրի խորհրդի անդամ Կրիվենկօ, շվեդական «Ալֆա-Լալար» կոչված սեպարատորների գործարանի ներկայացուցիչներ եւ ուրիշներ: Լեվինսկի մի ժամանակ, 1875 թվին, եկել էր Թիֆլիս իրրու Մոսկվայի գիւղատնտեսական ընկերութեան ներկայացուցիչ՝ շնորհաւորելու կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան քանահինգամակը:

Կովկասեան ցուցահանդէսի բացման օրից սկսած ամեն երեկոյ ցուցահանդէսի թատրոնում տեղի ունեն ներկայացումներ եւ կօնցերտներ: Կօնցերտներում մասնակցում են ուսուցիչ հայոց եւ վրաց երգեցիկ խմբեր: Հայերէն երգեցողութիւնը կատարվում է Ք. Կարա-Մուրզայի ղեկավարութեամբ, վրաց երգեցողութիւնը պ. պ. Կարգադրեանիւր եւ Կալմա-ձէի ղեկավարութեամբ: Ռուսաց խօրը երգում է ուսուցական եւ գնչուական եղանակներ: Երգեցիկ խմբերը մասնակցում են որոշ հերթապահութեամբ: Ազգագրական տեսակետով երգեցիկ խմբերը հետաքրքրական են: Նոյն տեսակետով հետաքրքրական է եւ բալայայի առժողների խմբերը, որ գտնվում է Լոյկօյի ղեկավարութեան տակ: Հասարակութիւնը համակրութեամբ է վերաբերվում երգեցիկ խմբերին եւ հաճութեամբ լսում է, ներողամտաբար վերաբերվելով նոյն իսկ երբեմն նկատվող թերութիւններին: Երեկոյնները միւս մասում տեղ են ընդել հետաւոր երկրներին: Երեկ տուած դերասանները եւ երգչուհիները, որոնք գրաւում են հասարակութիւնը իրանց չափազանց ճարպիկ շարժումներով, գեղեցիկ հագուստով, ընտրող խաղերով եւ երգերով: Մասնակցողներ իր շարժումները իրանց համարակալ արտայայտութեան մէջ հասնում են այն աստիճանին, որ հասարակութեան մէջ հարց է ծագում նրանց վայելչութեան մասին: Երեկոյնները վերջապանում ցոյց է տրվում «սերպանտին» կոչված զգեստաւորված պարուհու գունաւոր լուսաւորութեան մէջ կատարվող հետաքրքրական պարը: Երեկոյնները չափաւոր է մեծ բազմութիւն, որի մեծամասնութիւնը տղամարդիկ են: Թատրոնի մուտքը առանձին վճարով է:

Ֆինանսների մինիստրութիւնը, ինչպէս հազորդում են մայրաքաղաքի լրագրողները, քիչ ժամանակ առաջ մի չըրաբերական ուղարկեց իրան ստորագրված ուսումնարանական հաստատութիւնների վարչութիւններին, որով առաջարկում է ուսումնարանների համար կարեւոր պիտոյքները զննել աշխատել, որ նըրանք, ինչքան այդ հնարաւոր է, ուսուցական արդիւնաւորութեան պտուղ լինեն եւ ոչ արտասահմանաւ:

«Новое Обозрѣніе» լրագիրը հազորդում է, թէ Թիֆլիսի Յովհաննէս օրիորդաց ուսումնարանի տեսուչ պ. Յովհաննիսեան հազորդեց այդ ուսումնարանի վարչութեան, թէ ինքը հրաժարվում է տեսչի պաշտօնից: Յիշված ուսումնարանում միաժամանակ տեղի կունենան եւ այլ փոփոխութիւններ ուսուցչական խմբի մէջ:

Ներքին գործերի մինիստրը հաստատել է «Գրաւոր աշխատանքով պարագողների փոխադարձ օգնութեան Թիֆլիսի ընկերութեան» կանոնադրութիւնը:

Մայրաքաղաքի լրագրողները հազորդում են, որ Ֆինանսիայի կառավարչական շատ հիմնարկութիւնները մէջ այժմ ընդունվում են

այնպիսի պաշտօնականներ, որոնք պարտաւորապէս գիտեն ռուսներն լեզուն:

Պատշաճաւոր չըմաններու վերջնական սպէս վճարած է խիստ կոտորոյի եւ հակողութեան ենթարկել մասնաւոր երաժշտական դպրոցները եւ դրամատիկական դպրոցները: Այդպիսի դրպրոցներէ բացման թույլտուութիւնը կը տրվի յիշեալ այն անձանց, որոնք իրանց երաժշտական եւ մանկավարժական գործունէութեան համար վկայական կը ներկայացնեն:

Պետերբուրգի լրագրողները հաղորդում են, որ Կիւպիլի պոլիտեխնիկումը ատարցել է ֆինանսներէ մինիստրութեան առաջարկութիւնը ինստիտուտի կանոնադրութեան վերաբերեալ թեան մասին: Հարցերի ծրագիրը նման է համալսարաններին առաջարկած հարցերին: Պրոֆէսորները մասնագիտօրէն շուտով կը սկսին քննութեան ենթարկել ընթերցմի հարցը:

Պետերբուրգի նահանգական դատարանում շուտով քննվելու է մի հետաքրքիր դատ, որ սկսել է արքունական բալետային խմբի արտիստներէն մէկը: Վերոյիշեալ արտիստուհին, չը նայելով, որ յայտնել է թատրոնի վարչութեանը, թէ ինքը հիւանդ է եւ պարել չէ կարող, վարչութիւնը այնու ամենայնիւ օտար պել է նրան պարել, եւ դրա հետեւանքը այն է եղել, որ արտիստուհին հիւանդացի եւ զբոսայգի է բայետներին ժամակցելու ընդունաւ: Արտիստուհին Պետերբուրգի յայտնի փաստաբաններէ մէկի միջոցով քաղաքացիական պահանջ ներկայացրեց Կայսերական թատրոններէ վարչութեանը:

Մայրաքաղաքի լրագրողները հաղորդում են, թէ կարճ ժամանակից յետոյ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան մէջ պէտք է կազմվի մի առանձին մասնագիտօրէն, որ կը զբաղվի համալսարաններէ ընթերցմի ծրագրի քննութեամբ: Այս մասնագիտօրէն աշխատանքներին մասնակցելու համար կը հրաւիրվեն համալսարաններէ ընթերցողներ, մի քանի պրոֆէսորներ եւ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան բարձր պաշտօնականները: Իրեն ներք համալսարանական ընթերցմի ծրագիրը մշակելու համար կը ծառայեն բոլոր ուսանողները համալսարաններէ եւ բարձրագոյն դպրոցներէ վարչութիւններէ կարծիքները, որոնք ստացվում են մինիստրութեան մէջ ուսումնական լուսաւորութեան հոգաբարձուներէ եզրակացութիւններէ հետ միասին: Կարծիքներէ մեծամասնութիւնը, ինչպէս յայտնի է, միաբան են այն կէտում, թէ հարկաւոր է վերադառնալ 1863 թվի համալսարանական կանոնադրութեան սկզբունքներին, համալսարաններէ ընթերցողներին, ընկնողներին եւ պրոֆէսորներին ընտրութիւն եւ այլն: Մտադիր քննելու ի նկատ կանգնել են այն կարծիքները, որոնք յայտնված են պրոֆէսորներէ կամ այլ անձանց կողմից ընդհանուր եւ մասնագիտական մասնակցութեամբ, ինչպէս նաեւ մի քանի առաջարկներ, որոնք ստացվել են ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան մէջ:

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը կազմում է մի մասնագիտօրէն, որ պէտք է մշակել տարրական դպրոցներէ մէջ հիմնական փոփոխութիւններ ատենելու ծրագիրը: Մտադրութիւն կայ տարրական ուսումնական ծրագրի դասընթացը կրճատել այնպէս, որ ուսումը նրանց մէջ շարունակվի ընդամենը երկու տարի: Գաւառական եւ քաղաքային դպրոցներէ եւս կենթարկվեն հիմնական փոփոխութիւններ: Ենթադրվում է այդ դպրոցներէ ստորին դասարաններէ ուսման դասընթացը հաւասարեցնել գիմնազիւններէ ստորին դասարաններէ դասընթացին, իսկ բարձր դասարաններում ուսման հետ միասին սովորեցնել եւ զանազան արհեստներ:

Երկրի մեջ գրում են. «Երկու շաբաթից աւելի է, որ հոգաբարձութիւնը սպասում է, բայց էլ միայն այն մի որոշ կարգադրութիւն չը ստացաւ դպրոցի վերաբերմամբ: Պարզեան իր չէզոքութեամբ գործը կանգնեցրել է, նամակներ գրելու եւ էլ միայն գնալ դաւ զարծել է պար: Մինչեւ այսօր դպրոցը անտուրջ գրութեան մէջ է. աշակերտներ կան դպրոցում, վարչութիւն չը կայ: Արձակված ուսուցիչները չըմում են դպրոցի շուրջը: Վերահասարակ կաթողիկոսը շաբաթվանից այստեղ է, ասում են, որ եկել է դպրոցը կարգաւորելու:»

ՂՈՒԻԱՅԻՑ մեզ գրում են. «Ոգտվելով այն դէպքից, որ Բագուի նահանգապետը այստեղ է, այն գիւղացիները, որոնց ցանքները այս տարի լաւ բերք չեն բերել, խնդրաւորապէս եղան նրան՝ ժամանակ խնդրելով, որ գիւղական պահեստի շտեմարաններէ ցորենը եւ գարին յետոյ տան: Այդ գիւղացիները, ի միջի այլոց, գանգաղներն իրանց անբարեւոյց վիճակի լրա, ասելով թէ հարկերը անկանոն են գրում գիւղական գրագիրները «հարկ» բառաներու ժամանակ գիւղացիները վրա. աղքատ գիւղացին, որը հող չունի, կամ քիչ ունի, նոյնպէս եւ գրատ չունի, կամ քիչ ունի՝ համահաւասար է վճարում ունեւոր, հարուստ գիւղացու հետ: Այս ալը հանգամանքի վրա նահանգապետը ուշադրութիւն դարձրեց եւ խոստացաւ կարգադրութիւն անել:

ԳՕՐԻՍԻՑ (Ջանգեզուրի գաւառ) մեզ գրում են. «Ջաւաղ գաւառի Մուղանյու թուրք հասարակութիւնը ամառանոց գալիս է Ջանգեզուրի գաւառը: Այս տարի, օգոստոսի 27-ին, այդ հասարակութիւնը վերադառնում էր Մուղանյու գիւղը: Թափառականները պէտք է անցնէին պատային ճանապարհով, Ղարաբաղի հայաբնակ գիւղի մոտով: Այդտեղ չորս պահապան «ստրաժնիկներ» են կանգնեցրած, հսկելով, որ հիւանդ տաւար չանցնի, որովհետեւ ժամանակաւ կայ տարածված այցուցի: Զիտաւոր պահապանները արգելում են մուղանյուցիներին անցնել այդ ճանապարհով, որովհետեւ դրանց տաւարի մէջ ժանտախտ կայ, եւ ցոյց են տալիս մի այլ ճանապարհ: Թուրքերը հակառակվում են, ասելով թէ հիւանդութիւն չը կայ: Նրանցից պահանջում են վկայական անհամաձայնութիւն կողմից, բայց թուրքերը վկայական չեն ունենում եւ ուզում են դուրս անցնել: Պահապաններէ եւ հասարակութեան մէջ կռիւ է սկսվում, թուրքերը վերաւորում են պահապաններէ մէկին զլիւց: Այդ տեսնելով, միւս պահապաններէ մէկը գալիս է Գօրիս, յայտնում գաւառապետին, որ իսկույն կարգադրում է պրիստաւին շուտով հասնել այնտեղ: պրիստաւը եւ ստրաժնիկներէ օֆիցէրը գնում են այնտեղ: Թուրքերը ընդդիմանում են եւ նրանց, յարձակում են գործում պրիստաւին եւ օֆիցէրին վրա, վերաւորում են պրիստաւին եւ օֆիցէրին: Օֆիցէրը հրամայում է պահապաններին դնել արձակել, այդ գնդակներից սպանվում են երկու հոգի՝ գաւառաւոր եւ նրա որդին, մի քանիսն՝ էլ վերաւորում են, որոնցից մէկը կին է լինում: Վերաւորվածները երկուսը վախճանվում են: Գալիս է վերջապէս գաւառապետը, ինքը անձամբ մի պաշտօնային եւ մի քանի պահապաններէ հետ, գնում է կուրը դադարեցնում եւ արձանագրութիւն կազմում: Գնում թիւն է լինելու:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԻՐ

—Պարբեր «Journal Officiel» լրագիրը հաղորդում է, թէ Ռուսաց Կայսրի եւ Կայսրուհու ընդունելութեան համար ֆրանսիական կառավարութիւնը նշանակել է 1,529,400 եւ 1,332,600 ֆրանկի կրէդիտ. երկրորդ գումարով պէտք է ծածկվեն զինուորական մինիստրութեան ծախքերը: Բացի արանից ծովային մինիստրութեան ծախքերը համար նշանակված է 238,000 ֆրանկ: այնպէս որ Ռուսաց Կայսերական Չոյքի ընդունելութեան համար ֆրանսիական ընդամենը կը ծախսէ 3,100,000 ֆրանկ:

—«New-York Herald» լրագիրը հաղորդում է հետեւեւ խօսքերը, որ ասել է Մակ-Կինլէյ իր ամուսնուն վերաւորվելուց յետոյ նրա հետ առաջին անգամ տեսակցելու ժամանակ: Միայն առաջին կուրը չէ. մենք յաղթութիւն ենք տարել արանից էլ աւելի կատաղի կոհներէ ժամանակի եւ ինչքան էլ ծանր լինէին հանգամանքներն եւ պատրաստ եւ կուէլ ի սէրը, եթէ նոյն իսկ յոյսի ամենաչնչինն չըլլ միայն մնացած լինի. եւ յոյս ունեն, որ կը յաղթեն: «Herald» աւելացնում է, թէ նախագահ Մակ-Կինլէյ երկու տարի առաջ հիւանդացի էր ինֆուէնցայով, որից յետոյ նա չը կարողացաւ բուրդովին կաղաւթվել, իսկ վերջին ժամանակ նրա վրա նկատվում էին Բրայտի հիւանդութեան նշաններ:

—«Temps» լրագրին հաղորդում են էրզրու-մից, թէ Մուշ քաղաքի ժամանակակիցներէ թաւրու ընդհանուր տեղի ունեցաւ հայերի եւ թուրք կանոնաւոր զօրքերի մէջ: Ընդհանուր ժամանակ շատ մարդիկ սպանվեցին եւ վիրաւորվեցին:

—Օգոստոսի 27-ին աւստրիական կայսր Ֆրանց-Յովսէփ պաշտօնական ունկնդրութեամբ ընդունեց Մեքսիկայի նոր նշանակված դեսպան Գոն Սոսէ դը-Միլանդին: Այսպիսով պաշտօնական վերականգնվեցին զիւրաւարտա-

կան յարաբերութիւնները Աւստրո-Ունգարիայի եւ Մեքսիկայի մէջ, որոնք խզված էին աւստրիական էնթէնցոյ Մաքսիմիլիանի մահուանից յետոյ: Ինչպէս յայտնի է, էնթէնցոյ Մաքսիմիլիան ընտրված էր Մեքսիկայի կայսր եւ ապա հրացանի բռնված պետական յեղափոխութեան ժամանակ:

—«Berliner Tageblatt»-ին հաղորդում են, թէ Միացեալ-Նահանգներէ ազգայնականութիւնը ստատիկ դժգոհ է ստորկանական վարչութիւնից, որ չը կարողացաւ նախագահի դէմ կատարված սպանման փորձի առաջն անգամ Ռաթկինսկի շատ անգամ նախազգուշացումներ էր տալով զանազան անձներին այդ բանի մասին, բայց ոչ մի ուշադրութիւն չէր դարձրել նրանց վրա: Այն միջոցները, որոնք ձեռք էին առնված Մակ-Կինլէյին պաշտպանելու համար, բոլորովին բաւարար չէին: «Evening Post»-ին հետագրում են, թէ 1898 թվի ապրիլի 27-ին Նիւ-Եորկի անիշխանականները գոթային մեքենայ ուղարկեցին Մակ-Կինլէյին սիրտը արկղով, բայց այդ փորձը անաջողութեան հանգիպեց՝ չնորհիւ նախագահի զոյգութեան իրանից յետոյ եւս եղել են մի քանի փորձեր սպանելու Մակ-Կինլէյին:

—Վերջնականապէս պարզվեց, որ Մակ-Կինլէյին սպանողի իսկական անունը Չօգլու է: Նա Պաւլէ Չօգլուի որդին է, որ 1871 թվին գաղթել է Պոզնանից Հիւսիսային Ամերիկա եւ այժմ էլ ապրում է Կլիվլենդում: Նիւ-Եորկի լրագրողները աշխատակիցներից մէկը տեսնել են խօսել է Պաւլէ Չօգլուի հետ: Ոչ մի արդարացում չեն գտնում իմ որդու համար, ասաց յանցանորի հայրը, կարծում եմ միայն, որ նա ոչ այլ ինչ էր, թէ ոչ կոյր գործիք ուրիշների ձեռքին:

ՄԵՍԿԻՆ ՀՅՈՒԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՆ ԳՈՐԾԱՅԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

4 սեպտեմբերի
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Սեպտեմբերի 4-ին Նիկոլայեւսկայ երկաթուղու արագ գնացքով ճանապարհ ելաւ Սիբիր ֆինանսների մինիստրը օգնական Բոմանով:

ՕԴԵՍՍԱ: Ժամանեց Պետական Խորհրդի անդամ ինֆանտէրիայի գնեւրալ կոմս Շուվալով: Հասաւ բուքինական յանձնագիրով հազար ձիեր գնելու գործի համար:

ԲԲՈՒՆՍԲԻՆՏՏԷԼ: «Շտանդարտ» զրոսաւոր Ռուսաց Կայսերական Չոյքով ճանապարհ ելաւ առաւօտեան հինգ եւ կէս ժամին Դիւն-Կիրիւն, իսկ «Свѣтъ»-ը նաւը երէկ գնաց Կէսօրից յետոյ: Երէկ մեծ դուբը եւ Մէկ-Լէնուրդ-Շվիլինսկան մեծ դըստեր-մայրը ժամանեցին այցելութեան համար եւ գնացին «Շտանդարտ»: Մի փոքր ուշ, Ռուսաց Կայսերական Չոյքը, մեկլէնուրդեան բարձր անձանց հետ, այցելեց նաւահանգստային սահանափակաները:

ՊԱՐԻԶ: Իր գալու օրից կոմս Լամզ-Պորֆ ուշադիր սիրալիրութեան առարկայ է դարձել հանրապետութեան նախագահի եւ ֆրանսիական մինիստրների կողմից: Լրագրողները գովաբանական յօդուածներ են նուիրում նրան: «Journal des Debats» լրագիրը, թելով ռուսաց մինիստրի դիւրամատիկական մեծ յատկութիւնները եւ արդի ուսումնականութիւնը, ասում է. «Կոմս Լամզ-Պորֆ կարող է հաւատացած լինել, որ ֆրանսիան ոչ միայն տաժում է դէպի նա այն համալսարանները, որ բնականապէս պատկանում է բարեկամ եւ դանակից Միացեալ մինիստրին, բայց նոյնպէս յարգանքով է վերաբերվում նրա անձնաւորութեանը»:

ՊԱՐԻԶ: Նախագահ Լուրէ, Վալդէկ-Լուսայի եւ Դէլկասէի ուղեկցութեամբ, ճանապարհ ելաւ Դիւնկիրիւն 11 ժամ 15 րոպէին: Չը նայելով անպատեղանակին, բաշտաթիւ ամբողջ հաւաքվեց հիւսիսային կայսրանում, որ պատկառանքով ողջունում էր նախագահին: Անձրեւ է գալիս անընդհատ տառաւորից: Դիւնկիրիւնում ամբողջ գիւրի անձրեւ էր գալիս: Փողոցների զարդարանքը շատ վրձնապէս: Երկուց են կրում, որ անձրեւը ամբողջ օրը կը շարունակվի:

ԿՕՄՊԻՆ: Ի նկատի ունենալով, որ մօտենում է Ռուսաց Կայսերական Չոյքի ժամանելու ժամանակը, բոլոր մեծ լրագիրները այսօր լոյս տեսան հրճուածքով լի յօդուածներով: «Figaro» լրագրին ասում է. «Բոլոր ֆրանսիացիները համակված են Օգոստոսիան Հիւսիսային արտաւար կերպով ընդունելու բաղձանքով եւ մեր երկրի ու ժողովրդի մասին նրանց մէջ այն բարի յիշողութիւնները կենդանացնելու ցանկութեամբ, որ նրանք դուրս են բերել առաջին այցելութեան ժամանակ: Հարկաւոր են համարում կրկին անգամ աւելացնել ողջոյն հօդ եւ սիրեցեալ Միացեալ ֆրանսիական հողի վրա»:

ԲՈՒՅԻՆԱԼՈ: Մեղադրող պալատը Չօգլուի դէմ առաջին աստիճանի սպանութեան մեղադրանք յարուցեց: Մինիստրների եւ այստեղ գտնված բարեկամների հետ խորհրդակցութեան ժամանակ Բուզվէլտ խօսում են իր ծրագրի մասին այն մտքով, թէ նա նման է Մակ-Կինլէյի ծրագրին: Բուզվէլտ ցանկանում է միայն դադարեցնել մարապին պատերազմը ուրիշ պետութիւնների հետ եւ վերացնել պետական եկամուտների համար անհրաժեշտութիւն չը ներկայացնող մաքանարկեր, բայց այն պայմանով, որ այդ մաքանարկերը վերադառնալ չլսաւ չը հասցնէ ամերիկական արդիւնաբերութեանը: Բացի դրանից Բուզվէլտ այն կարծիքին է, թէ միջազգային վեճերը պէտք է լուծել միջնորդ դատարանով:

ՊԱՐԻԶ: «Gaulois» լրագրի մէջ տպված է յօդուած ֆրանսիական զօրահանդէսներին ներկայ եղած ռուսաց ընդհանուր շաքի հրամանատար գնեւրալ-լէյտէնանտ Սախարովի հետ ունեցած խօսակցութեան մասին: Վերջինս մեծ զովաւանքով խօսեց ֆրանսիական զինուորների համալսարանական զօրահանդէսներին եւ գովեց Թիւրան-Թաճիկ զօրքը, որը այժմ ամենալաւ թիւրան-թիւններն ունի աշխարհիս վրա:

ՊԷԿԻՆ: Այսօր կրկին եկան չինական զօրքեր, եւ մի եւ նոյն ժամանակ ամերիկացիները եւ եւազօնացիները յանձնեցին քաղաքի արդեւված մասը չինական իշխանութիւններին:

Տ ԵՍԿԱՅԻՄԵՐԻ

ԿԱԼՈՒԳԱ: Մեծ Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչ եւ Մեծ Իշխանուհի Նիկոլայեւսկայ Մալիկինսկայ ժամանեցին Կոզլիսկի գաւառը: ԲՕՍՏՈՎ ԴՕՆԻ ՎՐԱ: Վաղիկուկազան երկաթուղին ծրագրում է չինել սեւծովեան եզերային գծի: Այդ նոր գծի ծրագիրը շուտով քննութեան կենթարկվի:

Ժամանեց ֆինանսների մինիստրը: Կայսրանում նրան հանդիպեցին քաղաքի ներկայացուցիչները, իշխանաւոր անձինք եւ ֆինանսական մինիստրութեան պաշտօնականներ: Մինիստրը կէսօրից յետոյ ժամի 6-ին ուղեւորվեց դէպի Կովկաս:

ՏՈՒՂՈՆ: Այստեղի մէջ Պետերբուրգի եւ Կրօնադատի քաղաքապետներին հետադիւրս ուղարկեց, որոնց մէջ արտայայտված են անյօդողը բարեկամութեան զգացումները:

ԴԻՒՆԿԻՐԻՆԷ: Լուրէ, ընդունելով այն պաշտաւարութիւնը, որ ընկերական թաղաւորը ուղարկել է նրան ողջանելու, ասաց, որ ֆրանսիան բարեկամական զգացումներ է տաժում դէպի Բէլգիան: Լուրէյն քաղաքով անցնելիս ժողովուրդը ուղեկցում էր համակրութեան ողջոյններով: Քաղաքը եւ նաւահանգիստը լուսավառված են: Անձրեւը դադարել է, բայց սառտիկ քամի է փչում:

ԴԻՒՆԿԻՐԻՆԷ: Կայսրանում իշխանաւոր անձանց ընդունելուց յետոյ, նախագահը իր շախմատով գնաց ներկայ լինելու նոր քաղաքային տան օժանդ: Ամբողջ, որ, չը նայելով վատ եղանակին, հոգ բաղձութեամբ կանգնած էր ճանապարհին, օրը թնդացնում էր «կեցցէ Լուրէ, կեցցէ հանրապետութիւնը» բացականչու-թիւններով: Քաղաքը ճոխ կերպով զարդարված է զրօշակներով:

ԴԻՒՆԿԻՐԻՆԷ: Ենթադրեցէկտուրայի մօտ փոքր ինչ կապ առնելուց յետոյ նախագահական գնացքը ուղղվեց դէպի քաղաքային տունը: Ամբողջ ճանապարհին ժողովուրդը անընդհատ աղաղակում էր՝ «կեցցէ Լուրէ, կեցցէ Վալդէկ-Լուսո, կեցցէ Դէլկասէ»: Փողոցները լին են ֆրանս-ռուսական դոյնների զրօշակներով: Երբ գնացքը քաղաք հասաւ, հրճուալից աղաղակները աւելի սաստկացան: Մէջը ողջունեց նախագահին եւ կենաց թաւ առաւարկեց ի պատիւ Լուրէյի եւ Ռուսաց Կայսրի, ֆրանսիայի մեծ Բարեկամի արժանաւոր Չաւակի, բարեբար Մարգո, այնպիսի Բարեկամի, որի բոլոր մտածուածքները նպատակաւ կէտն է խաղաղութեան պահպանումը: Իր պատասխանում Լուրէ ասաց, որ ինքը շատ երջանիկ է գգում իրան, որ եկել է Դիւնկիրիւն ողջունելու համար մեծ երկրի Թագաւորին, ֆրանսիայի հաւատարմի Դանկիւնին: Ինքը կը հաղորդէ նրան Դիւնկիրիւնի բնակիչների տաժած համակրութեան եւ յարգանքի արտայայտութիւնները: Ամբողջ ֆրանսիան, երկու երկրների հետգնտէ աւելի սերտ դարձող մերձեցման մէջ տեսնում է իր ապահովութեան եւ մեծութեան գրաւականը: Ծառը ընդունվեց մեծ ծափահարութիւններով: Շքախուժը այնուհետեւ անձրեւով գնաց աւազանները եւ նաւահանգիստը նայելու: Երեկոյեան Լուրէ նեղ չըմանում ճաշկերթի տուեց ի պատիւ տեղական իշխանաւոր անձանց: Նա-

խաղաղ հազար ֆրանկ յանձնեց մէտին չքաւորներին եւ հիւանդանոցներին օգտին եւ հինգհարիւր ֆրանկ նաւաբեկութիւնից վնասովաներին օգտին:

Կ. ՊՕԼԻՍ. Սեպտեմբերի 4-ին այստեղ տեղի ունեցաւ մահական մի դէպք ժամատարաց: Սանիտարական խորհուրդը այսօրվայ նիստում վճռեց Սկուտարի արուարձանում, ասիական ափում, առանձին միջոցներ ձեռք առնել, նրկատի ունենալով մահական եղակի դէպք լինելը:—Միջնաժամերի նախկին միջնաժամը: Միջնաժամերի առաջվան միջնաժամը Զուլաբ-փաշան պահպանում է միայն ժողովրդական լուսաւորութեան միջնաժամը պաշտօնը:

Դիտելիքներն: Կէսօրից յետոյ ժամի 4-ին Լուրէ ժամանեց կայարանը. նրան հանդիպեցին վարչութեան բարձրագոյն ներկայացուցիչները: Եղանակը աւելի լաւ է, քան առաւօտեան:

ՊԵՏԵՐՈՒԹՅՈՒՆ. Մեծ իշխան Պաւել Ալեքսանդրովիչ սեպտեմբերի 4-ին ուղեւորվեց Իլինսկոյէ գէղը:

ԱՐՐԱՍ. Կանգ առնելով այստեղ, կարճատեւ ընդունելութեան ժամանակ Լուրէ, պատասխանելով ընդհանուր խորհրդի նախագահ Կալաբի, յայտնեց, որ իր հանդիպումը Ռուսաց Կայսրի հետ օգտակար կը լինի ֆրանսիական ժողովրդի համար եւ մի անգամ եւս կապա-ցուցանէ, որ հանրապետութիւնը, չը նայելով աւելի վարկիւրոյ, քան խոր ազդեցութիւնը, գիտէ հաստատակամ կերպով վարել ար-տաքին քաղաքականութիւնը հայրենիքի գե-րազոյն չանցնել օգտին Եւրոպայի, ներ-կայացնելով հոգեւորականութեան անդամ-ներին, բարեմաղթեց, որ ֆրանսիացիները պահպանեն երկու դաշնակցութիւնը—դաշնակ-ցութիւն Ռուսաստանի հետ եւ դաշ-նակցութիւն Յիսուս Բրիտանիայի հետ, միա-յով միացած եւ ազգայն: Լուրէ հաւատացրեց, որ հանրապետական կառավարութիւնը կը կա-րողանայ արդարացի այդ բարեմաղթութիւն-ները: Կայարանի մօտ բազմաթիւ ամբոխը ող-ջունում էր նախագահին:

ԽճճԱՐԱՐՈՒՄ. ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆՔԱՐ
Հրապարակչին: ԹԱԳՈՒՆԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍՏԱՆԱ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԽՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վորոնոյի արձանի հանդէպ)

ԱՄԵՆՈՐ, ԲԱՅԻ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԻԳ:
ԱՌԱՋՈՑՆԵՐԸ

Բ. Ս. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ—11—12 ժ. վերաբուժու-թեան, վնասական (սիֆիլիս) և միզաեւ. հիւանդ.
Կ. Ս. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և ներքին:

Կ. Ս. ԳԵԼԻԿԻՆԻ—12—1 ժ. ակնաշի, քթի և կ-կորի:

Զ. Ս. ԲԱՐԱՆԱՆԵԱՆԻ—11—12 ժ. կանանց և երե-կայաց հիւանդ.

Ս. Պ. ԿԱՐԱՊԵՆԵԱՆԻ—1—1/2 ժ. ներքին և երե-կայաց:

ԵՐԵՎԱՆԵՐԸ

Ե. Ն. ՌԱՍՏԱՐԵԿԻՆԻ—6—7 ժ. վերաբուժութեան և մարմնի:

Բ. Ս. ԳԵԼԻԿԻՆԻ—7—8 ժ. ակնաշի, քթի և կ-կորի:

Բ. Ս. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ—7/8—8 ժ.

Վճար 50 կ. չքաւորները ձրի համալսարանի (կօն-սիլիոնի) և օպերացիայի համար առանձին:
Օ. Ս. ՍԱԼԱՄԵԱՆԻ—տանը. ծագական և բժշ-կական մարմնամարդ. դիմել 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերահսկող:

Բժօկապետ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

այս արանով յայտարարում է, որ իր ատենում սեպտեմբերի ամսի 10-ին, ցերեկվայ ժամի 12-ին, նշանակված է աճուրդ կապալով տա-լու համար մօտ 135,00 պ. սաժ., հատ. 0,33X0,22 պ. սաժ. բէտօնէ կոյուղու շինու-թիւնը Միլիտանական փողոցում գոյութիւն ունեցող կոյուղուց, Ալեքսանդրովսկայա փո-ղոցով, մինչեւ Բաքրաձէյի տունը, 2450 բուր-լով Աճուրդին մասնակցել ցանկացողները կա-րող են տեսնել պայմանները Վարչութեան Շինարարական Բաժնում բոլոր լի օրերը ցե-րեկվայ 9—3 ժամերին: 1—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

արանով յայտարարում է, որ իր ատենում այս սեպտեմբեր ամսի 10-ին, ցերեկվայ ժամի 12-ին, նշանակված է աճուրդ կապալով տալու

համար մօտ 57,00 պ. սաժ., հատ. 0,25X0,16 պ. սաժ. բէտօնէ կոյուղու շինութիւնը Կիւ-պիշնայա փողոցում, Նրանցային փողոցա-կի մօտ գոյութիւն ունեցող կոյուղուց, մի եւ նոյն փողոցով, մինչեւ Սուլայովայի տունը, 880 բուրլով: Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանները Վարչութեան Շինարարական Բաժնում բոլոր լի օրերը ցե-րեկվայ 9—3 ժամերին: 1—3

ԻՄ ՄԱՆՈՒԹԱՅՏՈՒՐԱՅԻՆ ՄԱԳԱՋԻՆԻ
ՀԱՄԱՐ

ՀԱՐԿԱՒՈՐ Է ԳԱՆՁԱՊԱՀ
հմուտ առնայ լեզուին. ամսավճար 20 բուրլի, սեննակ եւ ճաշ:

Դիմել՝ Ногайскъ (Таврич. губ.) Никитѣ Егоровичу Черепову. 1—4

ՀԱՐԿԱՒՈՐ Է
ԳՐԱԳԵՏ ՏՂԱՅ
Հարցնել Սուգանաձեանի երաժշտական խա-նութեմ:

ԲԺՇԿԻՊԵՏ
ԳԵՈՐԳ ԹԱԴԵՍԵԱՆ
Ներքին եւ երեսայց հիւանդութիւններ:

Ընդունում է ամէն օր, առաւօտեան 9—11 ժ., երեկոյեան (բացի կիրակի օրից) 6—7 ժ.: Վէճամիջոցակայա փողոց, տ. 24:

1—5 (հ. չ. ե.)

Շուտով լոյս կը տեսնեն
ամենաշքեղ հրատարակութեամբ
ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ
1902 թ.

„ՇԻՐԱԿ“
ՊԱՏԻ ԵՎ ՇՈՑԻ
ՕՐԱՅՈՑՑՆԵՐԸ 2—3

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ
տեսչի թոյլտուութեամբ, ուսուցչի ընտանիքում
ընդունվում են
ԳԻՇԵՐՈՐԹԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ
Графская ул., домъ Элизова, № 10. 2—3

ՀԱՐԿԱՒՈՐ Է
ՄԷԿ ՏՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Չարվում (Заказ. краш) մի ընտանիքում երեխաների հետ պարագլու համար հայերէ-նից եւ ռուսերէնից: Ցանկացողները պայման-ներին մասին կարող են դիմել թիֆլիս, գրա-խանութ «Գուտտենբերգ» (Լօրիս-Մէլիքեան փողոց № 11) Գալտեանին: 2—6

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Օր. Սարգիս
ԵՐԵՄԱՋԱՆԵԱՆՑ
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻՆ

Առաւօտեան ժամը 9—2
Երեկոյեան ժամը 5—7
Վանքի մեծ փողոց, տուն Մարտիրոսեանցի:
(հ. կ.) 3—60

ՄԻ ՏԻՐԱՅՈՒ
որ ունի աջող ձայն եւ կարող է միաձայն խումբ պատրաստել, որոնում է պաշտօն եկե-ղեցիներում:

Հասցէն. Игдырь (Эрив. губ.) Закару За-варяну. 5—5

ԲԺՇԿ. ՎԱՆԵՆ ԱՐԴՈՒՆԻՆ
վերադարձած լինելով հանքային ջրերից, վեր-սկսել է հիւանդների ընդունելութիւնը իր նախկին բնակարանում: Սերգիսկայա փո-ղոց, տուն Մօզիլանովի, № 12: 4—5

ՉՈՒԹԱՋԵԱՆ
ընդունում է աշակերտութիւնը կար ու ձեւի եւ եւրօպական ձեւագործների համար, սեպ-տեմբերի 1-ից:

Վեճամիջոցակայա փողոց, № 14, տուն Ե-դիազարովի:
(հ. հ.) 7—8

Լեռնային ինժեներ Ալեքսանդր Դմիտրիւի Միխայլովի
ԳՈՒԹԱՅԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՉՐԱՆՑՔԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

արանով յայտնում է պ. պ. բաժնետէրերին, թէ երկրորդ վճարի ժամանակամիջոցը լրանում է 1901 թ. սեպտեմբերի 1-ին: Հատուցվելի վճարը, 200/0-ի չափով, այսինքն իւրաքանչիւ բաժնի 20 բուրլի, ընդունվում է Վարչութեան գրասենեակում: Թիֆլիս քաղաքում, Երեսանեա-հրապարակ, տուն Սարազովի եւ Բուխարյան—Ջրանցի գրասենեակում: 3—3

ԳԱՆՁԱԿ ՔԱՂԱՔՈՒՄ
Ուսումնարանական բարձրագոյն իշխանութեան թոյլտուութեամբ, ներկայ տարվայ օգոստոսի 20-ից բացվում են

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
հանրակրթական դպրոցով եւ պանսիօնով

Հանրակրթական դպրոցում, ի միջի այլոց, աւանդվում են ֆրանսիական եւ գերմանական լեզուները:

Օտարաքաղաքացիները դիմում են՝ Елисаветполь, учредителю коммерческих кур-совъ, Е. Н. Исаакову. (հ. հ. չ.) 7—10

ՏԱԼԻԹԵՎ ԳԵՒԹԵԱՆՑԻ
ԿԱՐ ՈՒ ՉԻԻԻ ԴՊՐՈՑՈՒՄ ԲԱԳԻՈՒՄ
(Чадровая ул., домъ Анопова, № 205)

Աշակերտների ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, իսկ պարագլուցները՝ 10-ից: Նոյն տեղում ընդունվում են նաեւ գիշերօթիկներ. (հ. չ.) 5—5

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՋԱՌԱՆՈՑՈՒՄ
վաճառվում են հետեւեալ հայերէն դասագրքերը.

Տէր-Ղեւոնդեան Ն., Մայրենի լեզու ա. տ. 35 կ., բ. տարի 40 կ., գ. տարի 50 կ., գ. տարի 65 կ., Մայրենի լեզուի քերականութեան տարրերը 50 կ., Սրբ. Պատմութիւն—Հին Կտակարան 50 կ., Նոր Կտակարան 50 կոպ.

Աղայեան Ղ., Ուսումն մայրենի լեզուի ա. տ. 25 կ., բ. տարի 30 կ., եւ գ. տարի 55 կ. Նազարեան Էմ. Բաժն., Հայոց լեզուի ուսուցիչ գ. տ. 40 կ., կ. գ. տարի 60 կ., Ընտիր հա-տուածներ ա. մասն—արձակ 1 բուրլի.

Կ. Կուսիեան Եւ Լ. Սարգսեան, Մայրենի խօսք 70 կոպ. Կոստանեան Կար., Նախաշարիչ—20 կ., Մաղկաբաղ, չրջան ա. գրաւառ 25 կ., չրջան բ. 35 կ., չրջան գ. 40 կ. Հիւսուածք գրաւառից աշխ. ա. մասն 75 կոպ.

Եղիշեկ 50 կ., Ազատագրելու 1 բ., Խորհնայի 1 բ. 25 կ., Նարեկ 1 բ., Դաւթար Փարպեցի 80 կ. Մալխասեան Սե., Գրաւարի հոգովում, խոնարհում 25 կ. եւ Գրաւարի համաձայնութիւնը 50 կ. Ղուկասեան Հ., Քերականութիւն գրաւ. լեզուի հայոց 50 կ., Ընդհան. պատմ. հին դար 80 կ. Բարսեղեան Նիկ., Դասաւորութիւնը ընդհ. պատմութեան, մասն II միջին դար 1 բ., մասն III նոր դար Հայոց պատմութեան, յաւելումով 1 բ.

Սահակեան Սահ. Բաժն., Դասաւորութիւնը կրօնի ա. տ. 20 կ., բ. տարի 20 կ., գ. տարի 30 կ., Սրբազան պատմութիւն հին ուխտի 45 կ., նոյնը համառօտ արքունի դպրոցների համար 30 կ., Սրբազան պատմութիւն նոր-ուխտի 40 կ., Գործք առաքելոց 40 կ., Ուսուցիչների համար հին-ուխտի մշակութիւնը 1 բ. 75 կ., նոր-ուխտի մշակու-թիւնը 2 բ. 5 կ., Ուսուցչուն քրիստ. կրօնի հատ. գ. 1 բ. 50 կ., հատ. ե. 50 կ. եւ Տասն պատուիրան 50 կ.

Աղանեան Գիւս Բաժն., Կարգ աստուածապաշտութեան Հայաստ. ա. եկեղեցւոյ, 34 նկարով, 50 կ., Աղօթատետր 10 կ., Կրօնի դասագիրք բ. տ. 15 կ., գ. տարի 15 կ., Տոմար եւ տօնացոյց 50 կ.

Երգիկեան Եղ. Բաժն., Դասագիրք կրօնի ա. գրքով 20 կ., բ. գրքովի ա. մասը 30 կ. Բեգ-Նազարեան Սար. Բաժն., Համառօտ քրիստոնէական վարդապետութիւն կազմով 60 կ. Տէր-Գաբրիէլեան Գաբ. Բաժն., Քրիստոնէական վարդապետութիւն 25 կ.

Մովսիսեան Յուս. վրդ., Դասաւորութիւնը կրօնի ա. տ. 15 կ., բ. տարի 20 կ. եւ գ. տարի 30 կ. Տէր-Սիմեոնեան Արց., Հայաստ. ա. եկեղ. քրիստոնէական, ձեռնարկ դաւանաբանութեան 2 բ., Ուսումն ա: Գրոց, ներածութիւն 1 բ.

Տէր-Սարգսեան Մալ., Հայկական գեղարութ. 30 կ., Գեղարութ., դասաւանդման եղան. 20 կ. Դեռոգ-Բեգեան Յով., Ժողովածու թուար. խնդիրների ամբողջ թուեր 40 կ.

Երգիկեան Գր., Թուարանական խնդիրներ եւ օրինակներ գ. տ. 35 կոպ. Վարձեկեան, Դասագիրք Թուարանութեան 70 կ.

Երգիկեան Սի., Դասագիրք քրիստոնէական հաւատոյ 60 կ. Սիմեոնեան Պ., Սրբազան պատմութիւն հին Կտակարանի 50 կ.

Մանգիլեան Սեդ., Ընտանեկան աշխարհ 25 կ. Բանարեան Առ., Առաջին ընթերցարան կազմով 40 կոպ.

Դիմել՝ Тифлисъ, Въ Центральную Книжную Торговлю. (հ.) 3—4

Կ Օ Ն Ֆ Ե Մ Ի Ե Ն Շ Օ Կ Օ Ղ Վ Դ Ի
գ ո ը ա թ ա ղ
„Փ. Ն. ՓՐԻԴՈՆԵԱՆ“
ԹԻՖԼԻՍԻՄ
Առաջարկում է թարմ կարամէլ մրգե-ղէնից, մօնպանսէ, մարմէլադ, պաստիլա, գէֆիր եւ այլն:
Պատուէրներով դիմել գործարան. Պալ-լովսկայա փողոց, սեփական տուն, տէլե-ֆօն № 362.
Սեփական գործարանական խանութը գտնվում է Մէլյանում, եղբ. Հէջուբեանների տանը, տէլեֆօն № 772.
Մեր ապրանքները ծախվում են բոլոր կոյունիական խանութներում:
Բազուրի եւ Բազուրի գաւառի համար ներկայացուցիչ է Նիկ. Սամարչեանց, Մի-քայէլեան փող., տ. Աշուկեանի:
51—100

